



ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դարձվածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործ ունենք հնագույն նախնական հավատալիքների, ծեսերի, անհմիզմի արտահայտությունների և աստվածաշնչյան կրոնաժողովրդական ավանդույթների ու մարդաբանական պատկերացումների հետ. դրանցում լեզվաոճական հատուկ արտացոլում են գտել վերոհիշյալ գործոնները: Այդ ամենը, որոշակի փոխակերպումներով, կապված գիտական, վարչաքաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի զարգացումների հետ, արտացոլվել են նաև գեղարվեստական գրականության մեջ՝ կատարելով առավելապես գաղափարագեղագիտական գործառույթներ:

Հիմնաբառեր. դարձվածք, հաղորդակցություն, լեզվամշակութային տարբերություններ, միջմշակութային հարաբերություններ, մշակութային համարժեք

Լեզվի մեջ արտացոլվում և փիլիսոփայական ու բարոյագեղագիտական արտահայտություն են ստանում սոցիալական ու պատմամշակութային կյանքի երևույթները, գյուղատնտեսական ու արդյունաբերական ոլորտների առարկաներն ու գործիքները, մշակույթի առարկայական դրսևորումները (նկար, քանդակ, գրեկեն և այլն), արտեֆակտները: Սա բացատրվում է լեզվի բնույթով՝ հաղորդակցականությամբ և կուտակողականությամբ, քանի որ լեզվին հատուկ են նշված երկու գործառույթներն էլ: Ընդ որում, կուտակողական ասելով, այստեղ նկատի են առնվում ոչ միայն ֆոնային գիտելիքները, որ մարդը կուտակում է սոցիալական ու մշակութային կյանքի ընթացքում, այլև լեզվին բնորոշ կուտակողական բնույթը, այն, որ լեզուն իր մեջ կուտակում է

պատմամշակութային կյանքի հետ կապված հասկացություններ, անվանումներ, եզրույթներ՝ դառնալով յուրատեսակ լեզվական պահեստարան մարդկային անցյալի ու ներկայի համար: Հաճախ լեզվի կուտակողական բնույթն անվանում են կոմունիկատիվ (հաղորդակցական)՝ նկատի ունենալով, որ լեզուն ժամանակակիցներին ու սերունդներին է փոխանցում մարդկային փորձը՝ սոցիալ-մշակութային, գիտամշակութային և այլ առումներով¹: Լեզուն ներառում և կուտակում է իրականության մեջ ի հայտ եկող, արտալեզվական նորաստեղծ առարկաներ, տարբեր երևույթների բացահայտումներ, գյուտեր, մի խոսքով՝ պատմամշակութային կյանքի տարբեր արտահայտություններ: Լեզուն դրանք անվանում է և արտահայտում որոշակի եզրույթներով կամ հասկացություններով: Իսկ ի՞նչ է նշանակում անվանել. անվանել՝ նշանակում է գրանցել, մտցնել լեզվի ֆոնդի մեջ, այսինքն՝ կուտակել: Իսկ դա էլ, իր հերթին, նշանակում է՝ արտահայտել: Արտահայտման մեջ առկա է նաև լեզվականորեն ձևակերպելու, այսինքն՝ հաղորդելու, փոխանցելու իմաստները: Ըստ այդմ, կարծում ենք, չի կարելի տարանջատել հաղորդակցական և կուտակողական հասկացությունները, քանի որ լեզվում դրանք համաժամանակյա են, և լեզվականորեն կուտակել՝ նշանակում է միևնույն պահին էլ հաղորդել, իսկ որևէ բան հաղորդել՝ նշանակում է արդեն իսկ հաղորդած կամ գրանցած լինել: Եվ մի բան կուտակել կամ գրանցել՝ նշանակում է արդեն իսկ հաղորդել: Այսօր դեռևս որոշակիորեն լուծված չեն շատ հարցեր ընդհանուր տիպաբանական ձևավորիչների հայտնաբերման կամ հաստատագրման առումով՝ պայմանավորված նրանով, որ, ինչպես նշում է Ա. Սարգսյանը. «.....առայած գոյություն չունի մշակութային տիպաբանության առարկան, ըստ որի վերջապես պարզ կարող է դառնալ, թե ինչն է բնորոշում լեզվամշակութաբանական տիպ ասվածին, ինչ բաղադրիչներից է այն կազմված, ինչն է մշակութային տիպ հասկացության մեջ նյութակիր միավորը»²: Բացի դրանից, նոր-նոր է սկսել զարգացում ապրել լեզվաբանական ուսումնասիրությունների համեմատական մեթոդը, որի արգասիքը կարող են դառնալ ինչպես տարբեր լեզվամշակույթների համար տիպաբանորեն ընդհանուր, այնպես էլ ազգամշակութային առումով եզակի, յուրատեսակ գծերը: Նման համեմատական ուսումնասիրությունների ընթացքում կարող են ի հայտ գալ նաև այնպիսի նոր փաստեր ու եղելություններ, որոնք ցույց կտան, որ մինչ այդ զուտ ազգային ու եզակի համարվող լեզվական (ասենք՝ դարձվածային) ձևերը առկա են նաև ուրիշ լեզուներում: Այս հանգամանքը մեզ հուշում է, որ լեզուները վաղնջական անցյալում կամ կապված են եղել «տիեզերական» ամբողջական առասպելով (որը հետագայում, «պայթյունի» հետևանքով, բեկորների է բաժանվել՝ ի հայտ բերելով բազմաթիվ ազգային առասպելներ, լեզենդներ ու «նվազագույն կրոնականի» պատկերացումներ (անիմիզմ), կամ էլ, դրան զուգահեռ, ինչպես հավաստում է Սուրբ Գիրքը, եղել է մեկ ժողովուրդ և մեկ միասնական լեզու, որը և բաժանվել կամ տրոհվել է տարբեր խոսվածքների (լեզուների): Դա տեղի է ունեցել, ըստ Ծննդոց գրքի, բաբելոնյան աշտարակաշինության ժամանակ. «Այն ժամանակ ողջ երկիրը մէկ լեզվով, մէկ բարբառով էր խոսում» (Ծննդ. 1:1):

¹ Տե՛ս **Верещагин Е.М., Костомаров В.Г.**, Язык и культура, 1990:

² **Ա.Սարգսյան**, Հույզեր նշող դարձվածքների լեզվագիտակցական վերաբերությունը, «Կանթեղ», 2002:

Լեզվի ոճական և արտահայտչական միջոցները շատ են, և յուրաքանչ-յուրը յուրովի է արտացոլում պատմամշակութային իրադրությունը, սոցիալ-հոգեբանական մարդկային փոխհարաբերությունները, գիտական, գեղագիտական և այլ բնույթի արժեքները, իրերն ու առարկաները, այդ թվում՝ ազգային ինքնատիպության արտահայտիչները՝ իրականությունները, որոնք լեզվի մեջ կազմում են մի շերտ և բնութագրվում են իբրև «իրենց համարժեքը չունեցող բառային միավոր» և «տվյալ ազգային լեզվի բառապաշարում՝ էկզոտիկ շերտ»³:

Ա. Խաչատրյանն իր «Մշակույթի դերը թարգմանության մեջ» աշխատանքում նշում է, որ թիրախ լեզվի բառային համարժեքը ճիշտ չի փոխանցում այն հասկացությունը, որ արտահայտում է այդ բառը աղբյուր լեզվում. թարգմանիչը կարող է գտնել տվյալ հասկացության, այսպես կոչված, մշակութային համարժեքը, այսինքն՝ թիրախ լեզվում գտնել մոտ կամ նման երևույթ կամ հասկացություն արտահայտող բառ: Օրինակ՝ անգլերեն *lunch* բառը հայերեն հիմնականում թարգմանվում է ճաշ, թեև հայերը, ճաշ ասելով, հասկանում են լիարժեք սննդի ընդունում (ապուր, մսեղենով որևէ կերակուր, համապատասխան նախուտեստներ և այլն), իսկ ԱՄՆ-ի բնակչի համար *lunch* հասկացությունն ենթադրում է ընդամենը մեկ գավաթ սուրճ և սենդվիչ:

Ըստ լեզուների ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդի՝ կան ցեղակից լեզուներ, որոնք ունեն բառային ու քերականական ընդհանրություններ: Լեզուների զուգահեռական-համեմատական նկարագրությունն օգնում է խորությամբ ընկալել լեզուն ուղղորդող օրենքները⁴: Դրա հիման վրա այսօր սկսել են ուսումնասիրել լեզվաոճական իրողությունները և դրանցով կազմված դարձվածային միավորները՝ նպատակ ունենալով վեր հանելու դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, որ առկա են տարբեր լեզուներում: Պետք է ասել, որ մինչ այժմ տեսական ու գործնական լեզվաբանության մեջ շեշտադրվել են դարձվածային միավորների՝ որպես լեզվամշակութային խտացված արտահայտությունների ինքնատիպությունը, տարբերությունը լեզվամշակութային այլ արտահայտություններից, հատկապես՝ ազգային-հոգեբանական և մշակութային: Վերջերս ավելի ու ավելի արդիական է դառնում տարբեր լեզուներով դարձվածային միավորների տիպաբանական ընդհանրությունների հայտնաբերումը և բնութագրումը բանասիրական համալիր հետազոտությունների, մասնավորապես՝ լեզվաոճական և լեզվաբանաստեղծական մեթոդով կատարվող ուսումնասիրությունների միջոցով⁵:

Պատմամշակութային շարժի կամ զարգացման ընթացքում, անշուշտ, փոխվում են շատ բաներ, երանգավորվում կամ, ավելի ստույգ՝ հնչերանգավորվում են ավանդական ասույթները և դարձվածային միավորներն՝ ըստ ժամանակների: Օրինակ՝ «Առյուծի սիրտ է կերել» ասույթն այլ կերպ է հնչել վաղնջական ժամանակներում, որոնք պայմանականորեն կարելի է կոչել «ջունգլիական», քան միջնադարյան եվրոպական և այսօրվա հետարդյունաբերական (պոստմոդեռնիստական) ժամանակներում: Բնականաբար, նշյալ ասույթն այսօր այլևս չունի կրոնական-ծիսակատարողական իմաստ ու հնչերանգ. դա այսօր ավելի բնորոշ է տեխնոգեն հասարակության ընկալմանը՝

³ Влахов С., Флорин С., Международные отношения. М., “Высшая школа”, 1986.

⁴ Տե՛ս Կրաչևսկի Բ. Կ., Контрастная грамматика, 1981:

⁵ Տե՛ս Կասպարյան Կ. Կ., Лингвопозитика образного сравнения. Ер., “Лусакн”, 2008:

«Պարզապես մի բան է արել կամ համակվել է մի մտայնությամբ, որը նրան թևավորել կամ քաջալերել» է: Ավելին, ժամանակակից մարդու համար այն իսպառ կորցրել է իր նախնական՝ մոզական նշանակությունը և նույնիսկ ձեռք է բերել երգիծական երանգավորում՝ «Իրեն քաջ է երևակայում», «Իրեն ցուցադրում է որպես քաջ»:

Տեսական գրականության մեջ առավել մեծ ուշադրություն է դարձվել դարձվածային միավորների բնութագրությանը՝ առանցքային բաղադրիչի սահմանումը, սերումը, դերը գեղարվեստական կամ ոչ գեղարվեստական (գործառական) տեքստերում, խոսքիմասային կազմը (բայական, գոյական, մակբայական, ածականական բառային զուգորդումներով և բառաբարդումներով) և այլն: Անշուշտ, նման բնութագրումները շատ կարևոր են և ունեն բացահայտիչ, ուղղորդիչ նշանակություն:

Թեև հնարավոր է յուրաքանչյուր լեզվում ցույց տալ որոշակի տարբերակիչ, ազգամշակութային առանձնահատկություններ, սակայն դրանք, ինչպես ցույց են տալիս համեմատական լեզվաոճաբանության վրա հիմնված ուսումնասիրությունները, ունեն պատմականորեն մշակված ինքնատիպ գծեր և առանձնահատուկ մշակութային բաղադրիչներ, սակայն, կարելի է ասել, դրանք նաև հետագա՝ պատմամշակութային առանձնացման և զարգացման արդյունք են: Առասպելաբանական և տիեզերաբանական վաղնջական պատկերացումներում, օրինակ, առկա են առավելապես ընդհանուր, տիպաբանորեն նույնական գծեր, որոնք ակնբախորեն երևում են դարձվածային միավորներում՝ հատկապես դրանց կազմախոսական տարբերակներում, որոնցում արտահայտվել են մարդաբանական վաղնջագույն պատկերացումները. գլուխ՝ առաջնորդ, սիրտ՝ աստվածային, ճակատ՝ ամրություն ու կայունություն, աչքեր՝ բանականություն և հայտնություն: Դրանց հիմքը իմաստային դաշտի նույնությունն է, որը լեզվական հիմնանշանակային առանձնահատկությունների նշանների ամբողջությունն է⁶: Այստեղ չափազանց կարևոր է նշել, որ հատկապես կազմախոսական դարձվածքները, գրեթե բոլոր լեզուներում, արտահայտում են միևնույն մարդկային ժեստերը, երբ խոսքը փոխանվանական-սինեկդոխային կազմությունների մասին է: Դա բացատրվում է նրանով, որ բոլոր ժողովուրդների մոտ, չնչին տարբերությամբ, մարդկային մարմնի մասերի՝ գլխի, աչքերի, ձեռքերի, ոտքերի, թարթիչների, լեզվի շարժումներն արտահայտում են նույն հոգեվիճակը և մտածումները: Օրինակ՝ դեմքի կարմրելը նշան է ամաչելու, գլուխը տարուբերելը՝ անհամաձայնության կամ թեական, ժխտողական վերաբերմունքի, ոտքերով կտրուկ դոփելը՝ անսանձ պոռթկումի՝ զայրույթի կամ ուրախության, նաև լռեցնելու, ձեռքերը վեր բարձրացնելը՝ հանձնվելու, լեզուն ցույց տալը՝ ծաղրելու կամ մի բան հասկացնելու, աչքերը խոնարհելը՝ համաձայնության, երբեմն էլ՝ անհամաձայնության, վիզը ծռելը՝ խեղճության, խնդրելու, գլուխը բարձր պահելը՝ անկախության և ազատախոհության և այլն: Ուստի, կապված նույն պատկերացումների և հոգեբանական-ապրումնային նույն վիճակների հետ, խնդրելու իմաստը կարող է դրսևորվել «գլուխը խոնարհել», համառորեն մի բան ասելը կամ խնդրելը՝ «երեսը պնդել» դարձվածքներով և այլն: Այդպիսով՝ տարբեր լեզուներում, հիմնանշանակային նույն իմաստը

⁶ Տե՛ս **Черная А. И.**, К вопросу выделения ФЕ в составе фразеосемантического поля // Сб. трудов кафедры лексики и фонетики английского языка МГПИ им. В.И. Ленина. М., 1974, էջ 132-148:

պահպանելով, ի հայտ են գալիս մի շարք կազմախոսական դարձվածային միավորներ՝ «բերան ծռել», «լեզու ցույց տալ», «ոտուձեռ ընկնել», «երես դնել», «կարմրել», «դեղնել» և այլն: Բոլոր մարդիկ, անկախ ազգությունից, ամաչելիս կարմրում են կամ վախենալիս՝ դեղնում (ձերմակում), իսկ ուրախանալիս՝ փայլում: Նույն սկզբունքով են կառուցվել նաև անգլերեն հետևյալ կազմախոսական դարձվածքները՝ Make eyes at sb, collect eyes, Throw/cast one's eyes down, Delight sb's ear, Cock an/one's eye, Make mouths, Foam at the mouth, Carry/hold one's head high, Shake one's head, Make/pull a sad/wry face, put one's tongue out at sb, Knit one's/the brows, Rub one's hands, Point an accusing tinger at, point the tinger of scorn at sb, lick/smack one's lips, Make (up) a lip, look down one's nose at sb; thumb one's nose at sb/sth, Turn up one's nose at sb/sth; make/pull a long nose at sb և այլն:

Փաստորեն, շատ ուշագրավ և հետաքրքիր երևույթներ՝ կապված թե՛ հայերենին, թե՛ անգլերենին բնորոշ լեզվամտածողության, հասկացությունների և դարձվածային միավորների հետ, որոնք նշված երկու լեզուներում էլ կարող են հանդես գալ ոչ միայն բառերի զուգորդումներով, որոնք կայուն են (կամ համեմատաբար կայուն) և ունեն այլաբերական նշանակություն, այլև մեկ բառով՝ ինչպես բարդ, բարդածանցավոր, այնպես էլ ածանցավոր: Ցայտուն օրինակ է «թևավորվել» բառը, որը հոմեոպատիկ կամ համակրական ընկալման պարագայում կարող էր առաջանալ այն հավատալիքից, թե արծվի կամ բազեի «ոգով» համակվողը կամ նրանց պաշտողն ինքը, նմանակման օրենքով, կարող էր ձեռք բերել թռչելու, սուրալու կարողություն, այսինքն՝ ի վերջո, «թևավորվել» և այլն: Մարդու թևավորվելը ոչ այլ ինչ է, եթե ոչ փոխաբերություն, որը և դարձվածային միավորի առաջացման հիմքն է:

Այսպիսով՝ բացի ընդհանրություններից ու նույնականությունից, կազմախոսական դարձվածային միավորներն ունեն նաև առանձնահատուկ գծեր՝ կախված ազգային, կրոնական, պատմամշակութային և այլ գործոններից: Մի դեպքում այդ առանձնահատկություններն այնքան ցայտուն են դրսևորվում, որ հնարավորություն են տալիս խոսելու զուտ ազգային, բացառիկ կամ եզակի դարձվածքների մասին, այլ դեպքերում գործ ենք ունենում, այսպես ասած, համընդհանրական դարձվածքի ազգային հոմանիշի կամ տարբերակի հետ:

АРМИНЕ ГРИГОРЯН

Преподаватель кафедры "Языков" АГЭУ,
кандидат филологических наук

Лингвокультурные и переводческие особенности фразеологических единиц.— Цель этой статьи заключается в более глубоком изучении фразеологических единиц (ФЕ), так как, особенно в настоящее время, наблюдается активизация межкультурных отношений между странами, что и делает необходимым для политических деятелей лучше понять историко-культурное наследие своих партнёров, в значительной степени сохранившееся в ФЕ. Следует также отметить возрастающий интерес к переводческому аспекту данных единиц, через который выявляется вся культурная информация, содержащаяся в ФЕ.

Архетипные ФЕ отходят от своих первоначальных значений и приобретают эстетические и идеологические коннотации, и в процессе перевода они приобретают также и национальную окраску.

Ключевые слова: фразы, коммуникация, лингвокультурные различия, межкультурные отношения, культурная равнозначность.

ARMINE GRIGORYAN

Lecturer at the Chair of
"Languages" at ASUE, Phd in Philology

Linguocultural and Translational Characteristics of Phraseological Units.— The purpose of the article is conditioned by the increase of the trend to study phraseological units more profoundly. This in its turn is due to the activation of the cross-cultural ties among nations, their interdependence, revival of political and economic relations urging the leaders in culture and in politics to have a better understanding of their partners' national edifice and historical and cultural past which is best embedded in phraseological units. Another important point is to meet the growing interest towards translations through which the whole cultural information stored in the source language and in phraseological units, in particular, is revealed.

The archetypical phraseological units move away from their original meanings to a considerable extent and acquire new connotations and in the process of translation they acquire "national colouring" as well.

Key words: phrase, communication, linguistic and cultural variations, intercultural relations, cultural equivalence.